ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 318- Ա **01 դեկտեմբերի 2015 թ.**

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՍՈՂԱՆՔՆԵՐԻ, ՎԹԱՐԱՅԻՆ ԿԱՄՈՒՐՋՆԵՐԻ ՓԼՈՒՋՄԱՆ ԵՎ ՀՆԱՐԱՎՈՐ ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ և 1.22-րդ կետերի դրույթներով

որոշում եմ՝

1. Մարզի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, սողանքների, հնարավոր քարաթափումների տեղամասերն ու վթարային կամուրջները հաշվառելու, անհրաժեշտ միջոցառումներ ձեռնարկելու, արտակարգ իրավիճակներում վնասների նվազեցման և հետևանքների վերացման աշխատանքներն օպերատիվ կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով՝

Հակոբյան Կարեն	- մարզպետի տեղակալ, նախագահ
Գալստյան Էդիկ	- ՀՀ ԱԻՆ ՓԾ Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ
Հովհաննիսյան Վանիկ	- մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ
Ասատրյան Իվան	- մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ
Բուդումյան Խաչիկ	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի տեղակալ
Զոհրաբյան Արմեն	- մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության ճարտարապետաշինարարական բաժնի վարիչ

2. Առաջարկել մարզի համայնքների ղեկավարներին՝

1) մինչև 2016 թվականի փետրվարի 1-ը սույն որոշմամբ ստեղծված հանձնաժողովին /նախագահ՝ Կարեն Հակոբյան/ ներկայացնել համայնքների հեղեղավտանգ, սելավավտանգ, սողանքավտանգ տարածքների, հնարավոր քարաթափումների և վթարային կամուրջների վերաբերյալ տեղեկատվություն և առաջարկություններ՝ հնարավոր արտակարգ իրավիճակների կանխարգելման ու հետևանքների վերացման ուղղությամբ, անհրաժեշտության դեպքում գործողությունների ուղղություններն ամրագրել համապատասխան իրավական ակտերով.

2) հաշվառել համայնքում առկա սարքին ինժեներական տեխնիկաները /մղաններ, էքսկավատորներ, ինքնաթափեր և այլն/ և ձեռք բերել պայմանավորվածություններ անհրաժեշտության դեպքում դրանց օգտագործման վերաբերյալ:

3. Հանձնաժողովի նախագահ Կարեն Հակոբյանին՝ համայնքներից ստացված տեղեկատվության հիման վրա հնգօրյա ժամկետում կազմել պլան-ժամանակացույց մարզում 2016 թվականի ընթացքում կանխատեսվող գարնանային հեղեղումների, վթարային կամուրջների փլուզման, հնարավոր քարաթափումների, սողանքավտանգ տարածքներում սպասվող հնարավոր վտանգների նվազեցման, հետևանքների վերացման միջոցառումների մասին և ներկայացնել հաստատման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ